

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

---


ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԶՐՈՒՅՑԸ

ԱՆԳԼԻԱՅԻ ԳՐՈՂ

Հ. Զ. ՈՒԵԼՍԻ ՀԵՏ



Պ Ե Տ Ն Ր Ա Տ







1000  
485

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԶՐՈՒՅՑԸ

ԱՆԳԼԻՍԻ ԳՐՈՂ

Հ. Զ. ՈՒԵԼՍԻ ՀԵՏ

(1934 իսկ լիտ 23-ի՞)

9422



Պատ. իմքազի Բաժնի Արայան  
Թարգմանիչ Վ. Յերգիբաջյան

Ս

Յեխ. իմքազի Յ. Խաչվանյան  
Սրբազրիչ Վ. Մանուկյան

Ս

Պեհրասի սպարան. Պատեր 1623  
Դլավիկո 8743. Լուսարանիչ. 3178  
Տրամ 10,

Տ.

A  $\frac{I}{1025}$

Ուելս. Յես շատ յերախտապարտ  
եմ Ձեզ, մ-ր Ստալին, այն բանի  
համար, վոր Դուք համաձայնեցիք  
ընդունել ինձ: Յես վերջերս յեզա  
Միացյալ Նահանգներում, յերկարա-  
տե գրույց ունեցա նախագահ Ռուզ-  
վելտի հետ և փորձեցի պարզել, թե  
ինչումն են կայանում նրա զեկա-  
վարող գաղափարները: Այժմ յես  
յեկել եմ Ձեզ մտտ, վորպեսզի հարց  
ու փորձ անեմ Ձեզ, թե ի՛նչ եք ա-  
նում Դուք աշխարհը փոխելու հա-  
մար...

Ստալին. Վոչ այնքան շատ բան...

Ուելս. Յես յերբեմն թափառում

եմ աշխարհից աշխարհ և, ինչպես  
հասարակ մարդ, նայում, թե ինչ է  
կատարվում իմ շուրջը:

Ստալին. Ձեզ նման խոշոր դոր-  
ծիչները «հասարակ մարդիկ» չեն:  
Անշուշտ, միայն պատմությունը  
կկարողանա ցույց տալ, թե ինչքան  
նշանակալի յե այս կամ այն խոշոր  
դործիչը, բայց համենայն դեպս  
Դուք նայում եք աշխարհին վոչ իր-  
բև «հասարակ մարդ»:

Ուելս. Յես մտադիր չեմ համեստ  
ձևանալ: Յես ուզում եմ ասել, վոք  
ձգտում եմ աշխարհը տեսնել հասա-  
րակ մարդու, և վոչ թե կուսակցա-  
կան քաղաքագետի կամ պետական  
պատասխանատու դործչի աչքերով:  
Միացյալ Նահանգներում կատարած  
իմ ճանապարհորդությունը ցնցող  
տղավորություն դործեց ինձ վրա:  
Փլվում ե հին Ֆինանսական աշխար-  
հը, նոր ձևով ե վերակառուցվում  
յերկրի տնտեսական կյանքը: Լենինն

իր ժամանակ ասել է, թե պետք է  
«սովորել առևտուր անել», սովորել  
այդ կապիտալիստներից: Այժմ կա-  
պիտալիստները պետք է սովորեն ձե-  
զանից, ըմբռնեն սոցիալիզմի վողին:  
Ինձ թվում է, վոր Միացյալ Նահանգ-  
ներում խոսքը վերաբերում է խոր  
վերակազմակերպության, պլանային,  
աշխինքն սոցիալիստական տնտեսու-  
թյան ստեղծմանը: Դուք և Ռուզվել-  
տը մեկնում եք յերկու տարբեր յե-  
լակետերից: Բայց արդյոք չկա՞ դա-  
դախարական կապ, դադախարական  
ազդակցություն Վաշինգտոնի և  
Մոսկվայի միջև: Որինակ՝ Վաշինգ-  
տոնում իմ աչքին խիեց նույնը, ինչ  
կատարվում է այստեղ՝ վարչական  
ասպարատի ընդլայնում, պետական  
մի շարք կարգավորող որդանների  
ստեղծում, համապարփակ հասարա-  
կական սպասարկության կազմակեր-  
պում: Ճիշտ այնպես, ինչպես ձեր

յերկրում, նրանց ևս սլակասում և  
դեկավարելու կարողությունը :

Ստալին. ԱՄՆ-ն այլ նպատակ ու-  
նեն, քան մեզ մոտ, ԽՍՀՄ-ում : Այն  
նպատակը, վոր հետապնդում են ամե-  
րիկացիները, առաջ և յեկել արն-  
տեսական անկանոնության, անտե-  
սական ճգնաժամի հողի վրա : Ամե-  
րիկացիներն ուզում են սրծնել ճրգ-  
նաժամից մասնավոր-կատարապիս-  
տական գործունեյության հիման  
վրա, առանց փոխելու անտեսական  
բազան : Նրանք ձգտում են մինխմու-  
մի հասցնել այն քայքայումը, այն  
վնասը, վոր սլատճասում և գոյու-  
թյուն ունեցող անտեսական սխառ-  
մը : Իսկ մեզ մոտ, ինչպես Դուք գի-  
տեք, ավերված հին անտեսական բա-  
զայի փոխարեն ստեղծված և բոլո-  
րովին այլ, նոր անտեսական բազա :  
Նույնիսկ, յեթե այն ամերիկացիե-  
րը, վորոնց մասին Դուք խոսում եք,  
մասամբ հասնեն իրենց նպատակին,

այսինքն մինխմումի հասցնեն այդ  
վնասը, ապա այդ դեպքումն ել նրանք  
չեն վոչնչացնի այն անարխիայի ար-  
մատները, վոր հատուկ ե գոյու-  
թյուն ունեցող կապիտալիստական  
սխտեմին: Նրանք պահպանում են  
այն տնտեսական կարգը, վորն ան-  
պայմանորեն պետք ե հասցնի, չի  
կարող չհասցնել անարխիայի՝ ար-  
տադրության մեջ: Ուրեմն լավա-  
զույն դեպքում խոսք պիտի լինի վոչ  
թե հասարակության վերակառույց-  
ման, վոչ թե անարխիային և ճղնա-  
ժամերին ծնունդ տվող հին հասարա-  
կակարգի վոչնչացման մասին, այլ  
նրա առանձին բացասական կողմե-  
րի սահմանափակման, նրա առանձին  
եկացեաների սահմանափակման մա-  
սին: Սուբյեկտիվորեն այդ ամերի-  
կացիները գուցե և մտածում են, թե  
վերակառուցում են հասարակու-  
թյունը, — բայց սուբյեկտիվորեն հա-  
սարակության այժմյան բաղան

պահպանուիլում և նրանց մտտ : Դրա համար ել, որչեկախվորեն, հասարակութեան վոչ մի վերահասուցում չի ստացվի :

Չի լինի և պլանային տնտեսութեան : Իսկ ի՞նչ և պլանային տնտեսութեանը, վորո՞նք են նրա մի քանի հատկանիշերը : Պլանային տնտեսութեանը ձգտում և վոչնչացնել գործադրկութեանը : Յենթադրենք, թե հաջողվի, պահպանելով կապիտալիստական կարգը, գործադրկութեանը հասցնել վորոչ մի նիւմումի : Բայց չե՞ վոր վոչ մի կապիտալիստներք և վոչ մի գնով չի համաձայնի գործադրկութեան լիակատար վերացմանը, գործադրկիների պահեստի այն բանակի վոչնչացմանը, վորի դերն և ճնշում գործ դնել աշխատանքի շուկայի վրա, ապահովել եժան վարձատրվող աշխատող ձեռներ : Ահա Չեղ արդեն մի ճեղքվածք բուրժուական հասարակութեան

«պլանային տնտեսութեան» մեջ :  
Պլանային տնտեսութեանը յեն-  
թադրում է, այնուհետև, վոր ար-  
տադրութեանն ուժեղանում է ար-  
դյունաբերութեան այն ճյուղերում,  
վորոնց արդյունքներն առանձնապես  
պետք են ժողովրդական մասսանե-  
րին : Իսկ Դուք դիտեք, վոր արտա-  
դրութեան ընդարձակումը կապիտա-  
լիզմի ժամանակ տեղի յե ունենում  
բոլորովին այլ շարժառիթներով,  
վոր կապիտալը ձգտում է դեպի  
տնտեսութեան այն ճյուղերը, վոր-  
տեղ ավելի նշանակալի յե շահույթի  
նորման : Յերբեք Դուք չեք կարող  
ստիպել կապիտալիստին ինքն իրեն  
վնաս հասցնելու և համաձայնելու  
շահույթի ավելի նվազ նորմայի,  
հանուն ժողովրդական կարիքների  
բավարարման : Առանց ազատվելու  
կապիտալիստներից, առանց վերջ  
տալու արտադրութեան միջոցների  
մասնավոր սեփականութեան սկզբ-

բունքին, Իուք չեք ստեղծի սլանա-  
յին տնտեսություն:

Ուելս. Յես համաձայն եմ Ձեր ա-  
սածներից շատերի հետ: Մտկայն յես  
կուղեյի ընդդէի, մոր յեթե յեր-  
կիրն ամբողջութեամբ ընդունի սլա-  
նային տնտեսութեան սկզբունքը,  
յեթե կառավարութեանը քիչ առ  
քիչ, քայլ առ քայլ սկսում ե հետե-  
ւորականորեն կիրառել այդ սկզբուն-  
քը, ապա, վերջին հաշիւով, Ֆինան-  
սական ոլորտիսիան կլռնչանա ե  
կհաստատուի սոցիալիզմն այն իմաս-  
տով, ինչ իմաստով այն հասկանում  
են անգլո-սաքսոնական աշխարհում:  
«Նոր կարգի» ուղղվելայան լողունու-  
ները հակայական եֆեկտ ունեն ե  
ըստ իս, սոցիալիստական լողունուներ  
են: Ինձ թվում ե, մոր փոխանակ  
ընդդէիու հակամարտութեանը յեր-  
կու աշխարհների միջե, սկտք եր  
արդի սլայմաններում ձգտել լեզվի

ընդհանրությունն հաստատելու բոլոր  
կառուցողական ուժերի միջև :

Ստալինն . Յերբ յես խոսում եմ  
սլլանային տնտեսության սկզբունքն  
իրագործելու անկարելիության մա-  
սին՝ կապիտալիզմի տնտեսաւ սն բա-  
ղայի սղահայանումով հանդերձ , յեռ  
դրանով ամենեւին չեմ ուզում վորք-  
րացնել Ռուզվելտի անձնական աղըն-  
բախ հատկությունները — նրա ձեռ-  
ներեցությունը , արիությունը , վըժ-  
ուականությունը : Անտարակույս ,  
արդի կապիտալիստական աշխարհի  
բոլոր կապիտաններից Ռուզվելտն  
ամենատեղեղ դեմքն է : Ռւստի և յես  
կուզեյի մի անդամ ևս ընդդծել , վոր  
իմ այն համողմունքը , թե կապիտա-  
լիզմի սղայմաններում անհնար է  
սլլանային տնտեսություն , բնավ չի  
նչանակում կասկած նախադաս Ռուզ-  
վելտի անձնական ընդունակություն-  
ների , տաղանդի և արիության մա-  
սին : Բայց ամենատաղանդավոր զո-

րաւարը, յեթե պայմանները չեն նպատուում նրան, չի կարող հասնել այն նպատակին, վորի մասին Դուք խոսում եք: Տեսականորեն, անշուշտ, չի բացառւում, վոր կարելի յի կապիտալիզմի պայմաններում, քիչ առ քիչ, քայլ առ քայլ գնալ գեպի այն նպատակը, վոր Դուք անվանում եք սոցիալիզմ այդ բառի անդլո-սաքսոնական մեկնարանությամբ: Բայց ի՞նչ կնշանակի այդ «սոցիալիզմը»: Լաւաղույն գեպքում՝ կապիտալիստական սլոֆիստի ամենից անսանձ առանձին ներկայացուցիչների վորոչ սանձահարումը, կարգավորող սկզբութունքի վորոչ ուժեղացումը ժողովրդական տնտեսության մեջ: Այս բոլորը լավ: Բայց հենց վոր Ռուդվելտը, կամ արդի բուրժուական աշխարհի վորեւե այլ կապիտան ուղենա ձեռնարկել վորեւե լուրջ բանի կապիտալիզմի հիմունքների դեմ, նա անխուսափելիորեն կատարյալ անհա-

Չողութեան կմատնվի: Չե՞ վոր բան-  
կերը Ռուզվելտի ձեռքում չեն, չե՞  
վոր արդյունարեբությունը նրա ձեռ-  
քում չե, չե՞ վոր խոշոր ձեռնարկու-  
թյունները, խոշոր տնտեսություն-  
ները նրա ձեռքում չեն: Չե՞ վոր այս  
բոլորը մասնավոր սեփականություն  
ե: Յե՛վ յերկաթուղիները, և՛ առև-  
տրրական նավատորմը— այս բոլորը  
մասնավոր տերերի ձեռքումն ե:  
Յե՛վ, վերջապես, վորակավորված  
աշխատանքի բանակը, ինժեներները,  
տեխնիկները, չե՞ վոր նրանք ևս  
Ռուզվելտի ձեռքում չեն, այլ մաս-  
նավոր տերերի, նրանք աշխատում  
են սրանց համար: Չի կարելի մո-  
ռանալ պետութեան Փունկցիաները  
բուրժուական աշխարհում: Իա—  
յերկրի պաշտպանութեան կալմա-  
կերպման, «կարգի» պահպանութեան  
կաղմակերպման ինստիտուտն ե,  
հարկերի հավաքման ասպարառը:  
Իսկ տնտեսությունը բուն իմաս-

տով քիչ ե վերաբերում կապի-  
 տալիստական պետութեանը, նա  
 նրա ձեռքումը չե: Ընդհակառա-  
 կը, պետութեանն և դանձում կապի-  
 տալիստական տնտեսութեան ձեռ-  
 քում: Ուստի յես վախենում եմ, վոք  
 Ռուզվելար, չնայած իր բոլոր յե-  
 ոանդին և ընդունակութեաններին,  
 չհասնի այն նպատակին, վոքի մա-  
 սին Դուք խոսում եք, յեթե ընդ-  
 հանրապես նա ունի այդ նպատակը:  
 Թերևս մի քանի սերունդներ հետո  
 կարելի լիներ մի վոքը մտանալ  
 այդ նպատակին, բայց յես անձնա-  
 պես այդ ել քիչ հավանական եմ  
 համարում:

Ուելս. Յես, գուցե, ամելի ուժեղ  
 կերպով, քան Դուք, հավատում եմ  
 քաղաքականութեան տնտեսական ին-  
 տերպրետացիային: Գյուտերի և ար-  
 դի դիտութեան շնորհիվ գործի յեն  
 դրված վիթխարի ուժեր, վոքոնք  
 տանում են դեպի մարդկային կողել-

A 1025  
210

տիվի ամենի լավ կազմակերպումը,  
 ամենի լավ դործունեյությունը, այ-  
 սինքն դեպի սոցիալիզմը: Անհատա-  
 կան դործողությունները կազմակեր-  
 պումը և կարգավորումը դարձել են  
 մեխանիկական անհրաժեշտություն,  
 անկախ սոցիալական թեորիաներից:  
 Յեթե սկսել բանկերի պետական վե-  
 րահսկողությունից, հետո անցնել  
 տրանսպորտի, ծանր արդյունաբե-  
 րության, ընդհանրապես արդյունա-  
 բերության, առևտրի և այլն վերա-  
 հսկողության, ապա այդպիսի համա-  
 պարփակ մի վերահսկողություն հա-  
 մազոր կլինի ժողովրդական տնտեսու-  
 թյան բոլոր ճյուղերի պետական սե-  
 փականության: Այդ կլինի հենց սո-  
 ցիալիզացիայի պրոցես: Չե՞ վոր սո-  
 ցիալիզմը, մի կողմից, և ինդիվի-  
 դուալիզմը՝ մյուս կողմից այնպիսի  
 հակոտնյաներ չեն, ինչպես ահն ու  
 սպիտակը: Նրանց միջև կան շատ  
 միջանկյալ աստիճաններ: Կա ինդի-

վիդուալիզմ, վորը սահմանակից և բանդիալիզմի, և կա կարգապահություն ու կազմակերպվածություն, վոր համադր և սոցիալիզմին: Պյանային անտեսության իրադործումը նշանակելի չափով կախված և տրնտեսության կազմակերպիչներից, վորակյալ տեխնիկական ինտելիգենցիայից, վորին կարելի չև քայլ առ քայլ նվաճել կազմակերպման սոցիալիստական սկզբունքների կողմը: Իսկ այդ ամենազլխավորն և: Վորովհետև—նախ կազմակերպում, հետո սոցիալիզմ: Կազմակերպումը հանդիսանում և ամենակարևոր դործոնը: Առանց կազմակերպման՝ սոցիալիզմի դադափարը լուկ դադափար և միայն:

Ստալին. Անհատի և կոլեկտիվի միջև, առանձին անձնավորության շահերի և կոլեկտիվի շահերի միջև անհաշտելի կոնտրաստ չկա, չսլետք և լինի: Այդ չսլետք և լինի, քանի

վոր կոլեկտիվիզմը, սոցիալիզմը չի  
ժխտում, այլ համատեղում և անհա-  
տական շահերը կոլեկտիվ շահերի  
հետ: Սոցիալիզմը չի կարող անտե-  
սել անհատական շահերը: Ամենա-  
լիակատար բավարարում տալ այդ  
անձնական շահերին կարող և միայն  
սոցիալիստական հասարակությունը,  
Դեռ ավելին, — սոցիալիստական հա-  
սարակությունը ներկայացնում և ան-  
հատի շահերի պահպանության միակ  
ամուր յերաշխիքը: Այս իմաստով  
անհաշտելի կոնտրաստ չկա «ինդի-  
վիդուալիզմի» և սոցիալիզմի միջև:  
Բայց կարելի՞ չե միթե ժխտել  
կոնտրաստը դասակարգերի միջև,  
ուսուցիչների դասակարգի, կապիտա-  
լիստների դասակարգի և աշխատա-  
վորների դասակարգի, պրոլետար-  
ների դասակարգի միջև: Մի կող-  
մից — ուսուցիչների դասակարգը, վո-  
րոնց ձեռքումն են բանկերը, գործա-  
բանները, հանքերը, տրանսպորտը,

սլաւնտացիաները      դադութներում :  
 Այդ մարդիկ վոչինչ չեն տեսնում ,  
 բացի իրենց շահից , իրենց շահույթի  
 ձգտումից : Նրանք չեն յենթարկվում  
 կուլեկախի կամքին , նրանք ձգտում  
 են իրենց կամքին յենթարկել ամեն  
 մի կուլեկախի : Մյուս կողմից — չքա-  
 վորների դասակարգը , շահադործ-  
 վողների դասակարգը , վորոնք չու-  
 նեն վո՛չ Փարրիկներ , վո՛չ դործա-  
 րաններ , վո՛չ բանկեր , վորոնք հար-  
 կադրված են ապրել իրենց աշխա-  
 տանքային ուժը ծախելով կապիտա-  
 լիստաներին և , վորոնք դուրի են ի-  
 րենց ամենատարրական սահանջները  
 բավարարելու հնարավորությունից :  
 Ինչպե՞ս կարելի յե հաշտեցնել այս-  
 պիսի հակադիր շահեր և ձգտումներ :  
 Վորքան յես դիտեմ , Ռուդոլֆելտին  
 չհաջողվեց այդ շահերի հաշտեցման  
 ուղի գտնել : Յե՛վ այդ հնարավոր ել  
 չե : Ասենք , Դուք ինձնից ավելի լավ  
 եք ծանոթ Միացյալ Նահանգների

դրութեանը, քանի վոր յես չեմ յեղել ԱՄՆ-ում և ամերիկյան դործերին հետևում եմ առավելապես դրակա- նութեան միջոցով: Մակայն յես վորոչ փորձ ունեմ սոցիալիզմի համար պայքարելու բնագավառում, և այդ փորձն ասում ե ինձ. յեթե Ռուզվելտը փորձի իրոք բավարարել պրոլե- տարների դասակարգի շահերը կա- պիտալիստների դասակարգի հաշվին, վերջինները նրան կփոխարինեն ու- բիշ նախադասով: Կապիտալիստները կասեն. նախադասները դալիս ու դնում են, իսկ մենք, կապիտալիստ- ներս, մնում ենք. յեթե այս կամ այն նախադասը չի պաշտպանում մեր շա- հերը, կգտնենք մի ուրիշին: Ի՞նչ կարող ե հակադրել նախադասը կա- պիտալիստների դասակարգի կամ- քին:

Ուելս. Յես առարկում եմ մարդ- կութեանն աղքատների և հարուստ- ների բաժանելու այդ պարզեցրած

դասակարգութեան դեմ : Անշուշտ կա  
մարդկանց մի կատեգորիա, վորոնք  
ձեռնում են բացառապէս վաստակի :  
Բայց միթե այդ մարդկանց չե՞ն հա-  
մարում խոչընդոտ, ճիշտ ինչպէս  
այստեղ : Մի՞թե Արեւմուտքում քիչ  
կան մարդիկ, վորոնց համար վաս-  
տակը նպատակ չէ, վորոնք վորոշ  
միջոցներէ տեք են, ուզում են այդ  
միջոցները շահագործման դնել և  
դրանից շահույթ են ստանում, սա-  
կայն ամենեւին դրանում չեն տեսնում  
իրենց գործունեւթյան նպատակը :  
Այդ մարդիկ միջոցներէ շահագործ-  
ման դնելը գիտում են վորպէս ան-  
պատեհ անհրաժեշտութեան : Մի՞թե  
քիչ կան տաղանդավոր և անձնակեր  
լնութեներներ, տնտեսութեան կազմա-  
կերպիչներ, վորոնց գործունեւթյու-  
թեան շարժառիթները բոլորովին այլ  
են, քան վաստակը : Իմ կարծիքով,  
կա սլարդապէս ընդունակ մարդկանց  
մի ստվար դասակարգ, վորոնք գի-

տակցում են ներկա սխտեմի անբա-  
վարար լինելը և կոչված են մեծ դեր  
խաղալու ասպագա, սոցիալխտական  
հասարակության մեջ: Յեա վերջին  
տարիներս շատ եմ դրադվել և շատ եմ  
մտածել ինժեներների, ողաչունների  
լայն շրջաններում, ուղամա-տեխնի-  
կական և այլ շրջաններում սոցիա-  
լիզմի և կոսմոպոլիտիզմի դադա-  
վարները սրոպագանդ անելու ան-  
հրաժեշտության մասին: Այդ շրջան-  
ներին դասակարգային պայքարի ուղ-  
ղադիժ սրոպագանդով մոտենալն ան-  
նպատակ է: Դրանք շրջաններ են,  
վորոնք հասկանում են, թե ինչ վի-  
ճակի կմատնվի աշխարհը, վերած-  
վելով արյան ճապաղիքի, սակայն  
այդ շրջանները դասակարգային  
պայքարի ձեր սրիմխտիվ հակամար-  
տությունը համարում են նոնսենս:

Ստալին. Դուք առարկում եք  
մարդկանց՝ հարուստների և աղքատ-  
ների բաժանելու պարզեցրած դասա-

կարգութեան դեմ : Անշուշտ, կան  
միջին խավեր, կա և այն տեխնիկա-  
կան ինտելիգենցիան, վորի մասին  
Դուք խոսում եք, և, վորոնց շրջա-  
նում կան շատ լավ, շատ աղնիվ  
մարդիկ : Այդ շրջանում կան և անաղ-  
նիվ, չար մարդիկ : Ամեն տեսակն ևլ  
կա : Բայց, ամենից առաջ, մարդկա-  
յին հասարակութեանը բաժանվում  
և հարուստների և աղքատների, ու-  
նևորների և շահագործիողների, և  
նկատի չառնել այդ հիմնականն բա-  
ժանումը և հարուստների ու աղքատ-  
ների միջև յեղած հակասութեանը—  
նշանակում և նկատի չառնել հիմնա-  
կան փաստը : Յես չեմ ժխտում, վոր  
կան միջանկյալ, միջին խավեր, վոր-  
ոնք կամ անցնում են իրար դեմ  
սրայքարող այդ յերկու դասակարգե-  
րից մեկն ու մեկի կողմը,  
կամ այդ սրայքարում չեղոք կամ  
կիսաչեղոք դիրք են բռնում : Բայց,  
կրկնում եմ, նկատի չառնել հասա-

րակու. Թյան այդ հիմնական բաժա-  
նումը և յերկու հիմնական դասա-  
կարգերի միջև մղվող հիմնական  
սլայքարը— նշանակում և անդիտա-  
նալ փաստերը: Այդ սլայքարը տեղի  
յե ունենում և տեղի կունենա: Այդ  
սլայքարի յեւքը կվճռի պրոլետարնե-  
րի դասակարգը, աշխատողների դա-  
սակարգը:

Ուելս. Բայց մի՞թե քիչ կան վոչ  
աղքատ մարդիկ, վորոնք աշխատում  
են և աշխատում են արդյունավետ  
կերպով:

Ստալին. Իհարկե, կան և մանր  
հողատերեր, արհեստավորներ, մանր  
առևտրականներ, բայց այդ մադիկը  
չեն, վոր վորոշում են յերկրի բախ-  
տը, այլ այն աշխատավոր զանգված-  
ները, վորոնք արտադրում են ամեն  
անհրաժեշտը հասարակության հա-  
մար:

Ուելս. Բայց չե՞ վոր կան շատ  
տարբեր կապիտալիստներ: Կան այն-

պիտանները, վորոնք միայն մտածում  
են պրոֆիտի, վաստակի մտախն, կան  
և այնպիտանները, վորոնք պատրաստ  
են զոհերի: Որինակ՝ ծեր Մորզանը.  
սա մտածում էր միայն վաստակելու  
մտախն, նա պարզապես պարտադիր էր  
հասարակութեան մարմնի վրա, նա  
լուի հարստութեաններ էր կուտա-  
կում իր ձեռքում: Բայց ահա վերջ-  
րեք Ռեկֆեկներին. նա վայլուն կազ-  
մակերպիչ է, նա տվել է նավթի վա-  
ճառահանումը կազմակերպելու այն-  
պիտի որինակ, վոր արժանի յե ընդո-  
րինակման: Կամ Ֆորդը. անշուշտ  
Ֆորդն իր զործը գիտե, նա եղոյիս-  
տական է, բայց արդյո՞ք նա ռացիո-  
նալ արտադրութեան կրքոտ կազմա-  
կերպիչ չէ, վորից զուք ել էք սովո-  
րում: Յես կուղեյի ընդդժեյ, վոր  
վերջին ժամանակ անգլո-սաքսոնա-  
կան յերկրներում ՍՍՀՄ վերաբեր-  
մամբ լուրջ բեկում է կատարվել հա-  
սարակական կարծիքի մեջ: Դրա

պատճառն է, առաջին հերթին ճա-  
պոնիայի դերքը և Գերմանիայի անց-  
քերը: Բայց կան նաև ուրիշ պատ-  
ճառներ, վորոնք չեն բղխում մի-  
միայն միջադրային քաղաքականու-  
թյունից: Կա ավելի խոր մի պատ-  
ճառ. լայն շրջանների դիտակցումն  
այն փաստի, վոր մասնավոր շահի  
վրա հիմնված սխտեմը փլվում է:  
Յեվ այս պայմաններում, ինձ թվում  
է, վոր պետք է վոչ թե շեշտել հա-  
կամարտությունը յերկու աշխարհ-  
ների միջև այլ ձգտել զուգակցելու  
բոլոր հառուցողական շարժումները,  
բոլոր հառուցողական ուժերն առա-  
վելադույն հնարավոր չամիով: Ինձ  
թվում է, թե յես Չեզանից ավելի  
ձախ եմ, մ-բ Ստալին, վոր յես գըտ-  
նում եմ, վոր աշխարհն արդեն շատ  
մոտեցել է հին սխտեմի վերացման:

Ստալին. Յերբ յես խոսում եմ այն  
կապիտալիստների մասին, վորոնք  
ձգտում են լուկ պրոֆիտի, վաստա-

կի, յես դրանով բնավ չեմ ուզում  
ասել, թե դրանք վերջին մարդիկն  
են, վորոնք վոչ մի այլ բանի ընդու-  
նակ չեն: Նրանցից շատերն ունեն  
անկասկած կաղմակերպչական խոշոր  
ընդունակություններ, վոր յես չեմ ել  
մտածում ժխտել: Մենք, խորհրդա-  
յին մարդիկ, կապիտալիստներից  
շատ բան ենք սովորում: Մորզանն  
ել, վորին Դուք տալիս եք այդպիսի  
բացասական բնութագիր, անպայման  
հանդիսանում ե լավ, ընդունակ կաղ-  
մակերպիչ: Բայց, յեթե Դուք խո-  
սում եք այն մարդկանց մասին, վո-  
րոնք պատրաստ են վերակառուցելու  
աշխարհը, ապա դրանց, անշուշտ,  
չի կարելի դանել այն մարդկանց  
չրջանում, վորոնք հալխատով և  
ճշմարտությամբ ծառայում են դրամ  
չահելու գործին: Մենք և այդ մար-  
դիկ դանվում ենք հակադիր բեվեո-  
ների վրա: Դուք խոսում եք Ֆորդի  
մասին: Անշուշտ նա արտադրության

կարող կաղմակերպելն է : Սակայն մի՞թե Ձեզ հայտնի չե նրա վերաբերմունքը դեպի բանվոր դասակարգը, մի՞թե Դուք չզխտեք, թե քանի բանվորներն են նա դուր տեղը փողոց և շարտում : Կապիտալիստը չզխտում է չահլին, նրան մոչ մի ուժով դրանից պոկել չի կարելի : Յեւ կապիտալիզմը կվոչնչացվի մոչ թե արտադրութեան «կաղմակերպիչներն», մոչ թե տեխնիկական ինտելիգենցիայի, այլ բանվոր դասակարգի ձեռքով, մորովհետև այդ խավն ինքնուրույն դեր չի խաղում : Ձե՞ մոր ինժեները, արտադրութեան կաղմակերպիչն աշխատում է մոչ այնպես, ինչպես ինքը կուղենար, այլ այնպես, ինչպես նրան կհրամայեն, ինչպես կտնօրինի տիրոջ շահը : Կան, իհարկե, բացառութեաններ, կան այդ խավից մարդիկ, մորոնք ազատվել են կապիտալիզմի հաշիշից : Տեխնիկական ինտելիգենցիան կարող է, մորոչ պայման-

ներում, «հրաշքներ» գործել, հսկա-  
յական ուղուտ բերել մարդկութեանը :  
Բայց նա կարող եւ բերել եւ մեծ  
վնաս : Մենք, խորհրդային մար-  
դիկս, սեփական քիչ վարձ չունենք  
տեխնիկական ինտելիգենցիայի նը-  
կատմամբ : Հսկամբ բերյան Հեղափո-  
խութեանից հետո տեխնիկական ին-  
տելիգենցիայի վարձ մասը չուզեց  
մասնակցել նոր հասարակութեան շը-  
նարարութեանը, հսկառակեց այդ  
շինարարութեանը, սարսուտի յեն-  
թարկեց այն : Մենք ամեն կերպ ձրղ-  
տում եյինք տեխնիկական ինտելի-  
գենցիային ներդրալել այդ շինարա-  
րութեան մեջ, մոտենում եյինք նրան  
և՛ սյապեա, և՛ այնպես : Քիչ ժամա-  
նակ չանցալ, մինչև վոր մեր տեխ-  
նիկական ինտելիգենցիան կանդնեց  
նոր կարգին ահախվորեն ողնելու ճա-  
նապարհի վրա : Այժմ նրա լալադուչն  
մասը սոցիալիստական հասարակու-  
թեան կառուցման առաջին շարքի-

րումն ե : Մենք, ունենալով այս փոր-  
 ձը, հեռու յենք տեխնիկական ինտե-  
 լիզենցիայի թե՛ դրական, և թե՛ բա-  
 ցասական կողմերը թերազնահատե-  
 լուց, և մենք դիտենք, վոր նա կա-  
 րող ե և՛ վնասել, և՛ «հրաշքներ»  
 դործել : Անշուշտ, դործն այլ կերպ  
 կլիներ, յեթե կարելի լիներ մի հար-  
 վածով տեխնիկական ինտելիզենցիա-  
 յին հոգեպես պոկել կապիտալիստա-  
 կան աշխարհից : Բայց այդ ուտոպիա  
 յե : Արդյոք շա՞տ կդտնվեն մարդիկ  
 տեխնիկական ինտելիզենցիայից, վո-  
 րոնք կվճռեն խղել կապը բուրժուա-  
 կան աշխարհից և ձեռնամուխ կլինեն  
 հասարակության վերակառուցմանը :  
 Ի՞նչ եք կարծում Դուք, շա՞տ կան  
 արդյոք այդպիսի մարդիկ, դեյցուք,  
 Անդլիայում, Ֆրանսիայում : Վո՛չ,  
 քիչ կան իրենց տերերից կապը խղե-  
 լու և աշխարհի վերակառուցումն  
 սկսելու սիրահարներ :

Բացի այդ, մի՞թե կարելի յե նկա-

տի չունենալ այն, վոր աշխարհը  
 վերափոխելու համար պետք է ունե-  
 նալ իշխանություն: Ինչ թվում է,  
 սըն մեկը, վոր Դուք խիտ թերա-  
 դնահատում եք իշխանության հար-  
 ցը, վոր դա ընդհանրապես դուրս է  
 ընկնում Ձեր կոնցեպցիայից: Ախր  
 ի՞նչ կարող են անել նույնիսկ լավա-  
 դույն գլխավորությունները տեր  
 մարդիկ, յերբ նրանք անընդունակ  
 են դնելու իշխանությունը վերացնե-  
 լու հարցը և իշխանություն չունեն  
 իրենց ձեռքում: Նրանք կարող են,  
 լավագույն դեպքում, աջակցություն  
 ցույց տալ այն նոր դասակարգին,  
 վորը կվերցնի իշխանությունը, սա-  
 կայն իրենք աշխարհը շուռ տալ չեն  
 կարող: Դրա համար պահանջվում է  
 մեծ դասակարգ, վորը փոխարիներ  
 կապիտալիստների դասակարգին և  
 դառնար նույնպիսի լիիշխան տեր,  
 ինչպես նա: Այդպիսի դասակարգ  
 հանդիսանում է բանավոր դասակար-

զը: Իհարկե, պետք է ընդունել տեխ-  
նիկական ինտելիգենցիայի ուղևու-  
թյունը և պետք է, իր հերթին, ուղ-  
նություն ցույց տալ նրան: Բայց  
չպետք է կարծել, Վոր նա, տեխնի-  
կական ինտելիգենցիան, կարող է  
պատմական ինքնուրույն դեր խաղալ:  
Աշխարհի վերափոխումը մեծ, բարդ  
և տանջանդին սրտցես է: Այդ մեծ  
զործի համար պահանջվում է մեծ  
զասակարգ: Մեծ նավին՝ մեծ նա-  
վազնացություն:

Ուելս. Այո՛, բայց մեծ նավազնա-  
ցության համար պահանջվում են նա-  
վապետ և նավազնաց:

Ստալին. Ճիշտ է, բայց մեծ նա-  
վազնացության համար պահանջվում  
է նախ և առաջ մեծ նավ: Ի՞նչ է նա-  
վազնացն առանց նավի: Մարդ ա-  
ռանց զործի:

Ուելս. Մեծ նավը— դա մարդկու-  
թյունն է, Վոչ թե զասակարգը:

Ստալին. Դուք, սըն Ուելս, յեղ-

նում եք, ինչպես յերևում է, այն նախադրյալից, թե բոլոր մարդիկ բարի յեն: Իսկ յես չեմ մոտանում, վոր շատ կան չար մարդիկ: Յես չեմ հավատում բուրժուազիայի բարությանը:

Ուելս. Յես մտաբերում եմ, թե ինչպես եր դործը տեխնիկական ինտելիգենցիայի վերաբերմամբ մի քանի տասնյակ տարի առաջ: Մյն ժամանակ տեխնիկական ինտելիգենցիան քիչ եր, մինչդեռ դործ շատ կար ե յուրաքանչյուր ինժեներ, տեխնիկ, ինտելիգենտ դանում եր իր դիտելիքների կիրառումը: Ուստի դա ամենաքիչ հեղափոխական դասակարգն եր: Իսկ այժմ նկատվում է տեխնիկական ինտելիգենցիայի առատությունն ե նրա տրամադրությունը խիստ փոխվել է: Վորակավոր ինտելիգենտը, վորն առաջ յերբեք չեր ել կամենա ականջ դնել հեղափոխական խոսակցություններին, այժմ դրանցով

իսիստ հետաքրքրվում ե : Վերջերս  
ինձ հրավիրեցին Արքայական Ընկե-  
րության՝ մեր խոշորագույն անդլիա-  
կան դիտական ընկերության ճաշին :  
Նախագահի ճառը մի ճառ էր հողուտ  
սոցիալական սլանալորման և դիտա-  
կան հառալարման : Սրանից յերե-  
սուն տարի առաջ այնտեղ նույնիսկ  
չեյին կամենա լսել այն , ինչ յես  
ասում եմ : Իսկ այժմ այդ ընկերու-  
թյան գլուխը կանգնած և հեղափո-  
խական հայացքներով մի մարդ , վոր  
սնդում ե մարդկային հասարակու-  
թյան դիտական վերակազմակերպման  
վրա : Դասակարգային պայքարի  
Ձեր սրտագանդը հաշվի չի առել  
այս փաստերը : Տրամադրություննե-  
րը փոխվում են :

Ստալին . Այո , յես այդ դիտում և  
այդ բացատրվում ե նրանով , վոր  
կապիտալիստական հասարակությու-  
նըն այժմ գտնվում ե փակուղում :  
Կապիտալիստները փնտռում և չեն

կարողանում դանել այնպիսի մի  
 յեւթ այդ փակուղուց, վոր համառոտ-  
 դելի լինի այդ դասակարգի արժանա-  
 պատվության հետ, այդ դասակար-  
 ցի շահերի հետ: Նրանք կարող են  
 մասնակի չափով ճշնամտակց դուրս  
 մաղլցել չորեքթաթ, սակայն այնպի-  
 սի մի յեւթ, վորով նրանք կարողա-  
 նային դուրս դալ դլուխը բարձր  
 պահած, վորն արմատապես չխախ-  
 տեր կապիտալիզմի շահերը, — նրանք  
 դանել անկարող են: Այդ, իհարկե,  
 գլուժ են տեխնիկական ինտելիգեն-  
 ցիայի լայն շրջանները: Նրա զգալի  
 մասն սկսում է դիտակցել շահերի  
 ընդհանրությունն այն դասակարգի  
 հետ, վորն ընդունակ և յեւթ ցույց  
 տալ փակուղուց:

Ուելա. Դուք, մ—ր Ստալին, այլելի  
 քան, վորեիցե մեկ ուրիշը, լավ դի-  
 տեք, թե ի՛նչ է հեղափոխությունը,  
 և այն ևլ դորձնականում: Արդյո՞ք  
 յերբևե ապստամբո՞ւմ են իրենք

մասսաները: Արդյոք դուք հաստատ-  
ված ճշմարտությունն չե՞ք համարում  
այն փաստը, վոր բոլոր հեղափոխու-  
թյունները կատարվում են փոքրա-  
մասնության ձևերով:

Ստալին. Հեղափոխության համար  
պահանջվում է առաջատար հեղափո-  
խական փոքրամասնություն, բայց  
ամենատաղանդավոր, անձնվեր և յե-  
ռանդուն փոքրամասնությունն իսկ  
անողնական կլինի, յեթե չհենվի մի-  
լիոնավոր մարդկանց թեկուզ և  
պասիվ աջակցության վրա:

Ուելս. Թեկուզ և պասիվ: Գուցե  
յենթադիտակցական:

Ստալին. Մասամբ և՛ կիսարնազ-  
դական, և՛ կիսադիտակցական ա-  
ջակցության վրա, բայց առանց մի-  
լիոնների աջակցության ամենից լավ  
փոքրամասնությունն անզոր է:

Ուելս. Յես հետևում եմ կոմունիս-  
տական սրոսդազանդին Արևմուտ-  
քում և ինձ թվում է, վոր այդ սրո-

պաղանդն արդի պայմաններում հըն-  
չում և խիստ մոզան անցած, վո-  
րովհետև նա հանդիսանում և բռնի  
զործողությունների պրոպագանդը:  
Հասարակարգը բռնի ուժով տապալե-  
լու այդ պրոպագանդը տեղին եր այն  
ժամանակ, յերբ խոսքը վերաբերում  
եր այս կամ այն բռնակարության  
միահեծան տիրապետությանը: Բայց  
արդի պայմաններում, յերբ տիրա-  
պետող սխառեմը միևնույն և՛ փրլ-  
վում և, և առանց այդ ևլ քայքայ-  
վում և, շեշտը պետք և դնել վոչ թե  
ինսուրբեկցիայի, այլ եֆեկտիվու-  
թյան, ձեռնհասության, արտադրո-  
ղականության վրա: Ինսուրբեկցիոն  
շեշտն ինձ թվում և հնացած: Կոնս-  
տրուկտիվորեն մտածող մարդկանց  
տեսակետից, կոմունիստական պրո-  
պագանդն Արևմուտքում ներկայա-  
նում և վորպես արդեւք:

Ստալին. Անշուշտ, հին սխառեմը  
փրվում, քայքայվում և: Այդ ճշմա-

րիտ ե : Բայց ճշմարիտ ե ե այն , վոր  
 նոր ճիգեր են գործ դրվում այլ մե-  
 թողներով , բոլոր միջոցներով պաշտ-  
 պանելու , փրկելու այդ կործանվող  
 սխտեմը : Ծիշտ արձանագրումից  
 Դուք անում եք անճիշտ յեզրակացու-  
 թյուն : Դուք ճիշտ եք արձանագրում ,  
 վոր հին աշխարհը փլվում ե : Մա-  
 կայն Դուք իրավացի չեք , յերբ կար-  
 ծում եք , թե նա փլվի ինքն ի-  
 րեն : Վո՛չ , մի հասարակակարգի  
 փոխարինումը մի այլ հասարակա-  
 կարգով հանդիսանում ե բարդ ու  
 յերկարատև հեղափոխական պրոցես ,  
 Այդ սոսկ տարերային պրոցես չե ,  
 այլ դա մի պայքար ե , մի պրոցես ,  
 վորը կապված ե դասակարգերի ընդ-  
 հարման հետ : Կապիտալիզմը փտել  
 ե , բայց չի կարելի նրան համեմատել  
 պարզապես մի ծառի հետ , վորն  
 այնքան ե փտել , վոր ինքն իրեն պիտի  
 դետին ընկնի : Վո՛չ , հեղափոխությունը  
 մի հասարակակարգի փոխարինումը

մի ուրիշով, միշտ յեղել և պայքար,  
տանջադին և դաժան պայքար, մա-  
հու և կենաց պայքար: Յեւ ամեն  
անդամ, յերբ նոր աշխարհի մարդիկ  
իշխանության դլուխն են անցել,  
նրանք պետք են ունեցել պաշտպան-  
վելու հին աշխարհի փորձերից՝ ու-  
ժով վերադարձնելու հին կարգը,  
նրանք, նոր աշխարհի մարդիկ պետք  
և վոր միշտ աչալուջ լինեն, պատ-  
րաստ լինեն հակահարված տալու  
հին աշխարհի դավերին, ուղղված  
նոր կարգի դեմ:

Այո՛, Դուք իրավացի յեք, յերբ ա-  
սոււմ եք, թե հին հասարակակարգը  
փլվում է, սակայն նա չի փլվի ինքն  
իրեն: Վերցնենք, որինակ, Փաշիդ-  
մը: Փաշիդմը ոեակցիոն մի ուժ է,  
վոր փորձում է պահպանել հին աշ-  
խարհը բռնության միջոցով: Ի՞նչ  
պիտի անեք Դուք Փաշիտաների հետ:  
Հորդորե՞ք նրանց: Համոզե՞ք նրանց:  
Բայց չե՞ վոր այդ ամենեւին չի ներ-

գործի նրանց վրա: Կոմունիստները  
բնավ չեն իդեալականացնում բռնու-  
թյան մեթոդը: Բայց նրանք, կոմու-  
նիստները, չեն ուզում հանկարծա-  
կիի բերվել, նրանք չեն կարող հույս  
դնել այն բանի վրա, վոր հին աշ-  
խարհն ինքն իրեն կհեռանա բեմից,  
նրանք տեսնում են, վոր հին կարգը  
սլաշասղանվում է ուժի միջոցով, և  
դրա համար կոմունիստներն ասում  
են բանվոր դասակարգին. սլատ-  
րաստվեցեք ուժին սլատասխանել ու-  
ժով, արե՛ք ամեն ինչ, վորսլեսդի  
ձեզ չճղմի կործանվող հին կարգը,  
մի՛ թույլ տաք նրան, վոր շղթայի  
ձեր ձեռները, վորոնցով դուք սլտի  
տապալեք այդ կարգը: Ինչսլես տես-  
նում եք, մի հասարակակարգ մի ու-  
րիչով վոխարինելու սլրոցեսը կո-  
մունիստների համար չի հանդիսա-  
նում սլարդասլես տարերային և խա-  
ղաղ մի սլրոցես, այլ բարդ, յերկա-  
րատե ու տանջադին մի սլրոցես: Կո-

մունիստները չեն կարող հաշվի չառնել փաստերը :

Ուելս. Սահայն նայեցեք-տեսեք, թե ի՞նչ է կատարվում այժմ կապիտալիստական աշխարհում : Դա սոսկ կարգի փլուզում չէ : Դա պայթումն է սեփական բռնութեան, վորն ստացել և ուղղակի դանդաղեցրելի աշխարհի կերպարանքը : Յե՛վ ինձ թվում է, վոր յերբ խոսքը վերարկւում է այդ սեփական և անխելք բռնարարիչներին հետ յեղած կոնֆլիկտներին, սոցիալիստները պետք է դիմեն որեւէին և փոխանակ վոստիկանութեանը դիտելու վորպէս թշնամի, աջակցեն նրան սեփականներին դեմ մղվող պայքարում : Ինձ թվում է, վոր չի կարելի պարզապէս գործել հին, վոչ ճկուն ինսուրրեկցիոն սոցիալիզմի մեթոդներով :

Ստալին. Կոմունիստները յեղնում են պատմական հարուստ փորձից, վորը սովորեցնում է, թե իրենց

դարն ասլրած դասակարգերը հոժա-  
րակամ չեն հեռանում պատմական  
րեմից: Հիշեցեք XVII դարի  
Անգլիայի պատմությունը: Միթե  
չատերը չեյի՞ն ասում, թե հին հա-  
սարակակարգը փտել է: Բայց, այ-  
նուամենայնիւ, մի՞թե հարկ չեղաւ,  
վոր դար կրոմվելը նրան ուժով վերջ  
տալու համար:

Ուելս. կրոմվելը դործում եր,  
հենվելով սահմանադրության վրա և  
սահմանադրական կարգի անունից:

Ստալին. Հանուն սահմանադրու-  
թյան նա դիմեց բռնության, մահա-  
պատժի յենթարկեց թագավորին,  
ցրեց պարլամենտը, ձերբակալում եր  
վոժանց, դլխատում ուրիշներին:

Սակայն մի որինակ վերցնենք մեր  
պատմությունից: Մի՞թե պարզ չեր  
յերկար ժամանակ, վոր ցարական  
կարգը փտում է, վոր նա փլվում  
է: Սակայն վորքան արյուն հարկ  
յեղաւ նրան տապալելու համար:

Իսկ Հոկտեմբերյան Հեղափոխու-  
թյո՞ւնը: Միթե քե՞զ կային մարդիկ,  
վորոնք գիտեցին, վոր միայն մենք,  
բուլչեիկներս, ցույց ենք տալիս միակ  
ճիշտ յեւքը: Միթե հասկանալի չե՞ր,  
վոր փառել ե ուսուսական կապիտալիզ-  
մը: Սակայն Դուք գիտեք, թե վոր-  
քա՞ն մեծ եր գիմադրությունը, վոր-  
քա՞ն արյուն թափվեց սրաշտպանելու  
համար Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունը բոլոր թշնամիներից, ներքին  
և արտաքին:

Կամ վերցնենք XVIII դարի վերջի  
Փրանսիան: 1789 թվից շատ առաջ  
չատերի համար սլարդ եր, թե վոր-  
քան են փառել թագավորական իշխա-  
նությունը, ճորտատիրական կարգե-  
րը: Սակայն դործը գլուխ չեկալ,—  
չեր կարող գլուխ դալ առանց ժողո-  
վրդական ապստամբության, առանց  
դատակարգերի ընդհարման:

Ուրեմն ինչո՞ւմն ե բանը: Բանն  
այն ե, վոր այն դասակարգերը, վոր-

բոնք պետք է հեռանան սլատմու-  
թյան բեմից, ամենից վերջն են հա-  
մողվում, թե իրենց դերը վերջացած  
է: Դրանում նրանց համոզելն ան-  
հնար է: Նրանց թվում է, վոր հին  
կարգի փտած շենքի ճեղքերը կարելի  
յէ ծածկել, վոր կարելի յէ նորոգել  
և փրկել հին կարգի փլչող շենքը:  
Դրա համար կործանվող դասակար-  
գերը զենք են վերցնում և բոլոր մի-  
ջոցներով սկսում են սաշտապանել ի-  
րենց՝ վորպես տիրապետող դասա-  
կարգի, դոյությունը:

Ուելս. Բայց Ֆրանսիական Մեծ  
Հեղափոխության գլուխը քիչ փաս-  
տարաններ չէյին կանդնած:

Ստալին. Դուք ժխտո՞ւմ եք միթե  
ինտելիգենցիայի դերը հեղափոխա-  
կան շարժումներում: Ֆրանսիական  
Մեծ Հեղափոխությունը մի՞թե փաս-  
տարանական եր և վոչ ժողովրդական  
հեղափոխություն, վորը հաղթեց,  
վոտքի հանելով ժողովրդական հսկա

դանդվածները Ֆեոդալիզմի դեմ և  
պաշտպանելով յերրորդ դասի շահե-  
րը: Յեւ մի՞թե փաստաբանները՝  
Ֆրանսիական Մեծ Հեղափոխութեան  
առաջնորդները թվից՝ դորժում եյին  
հին կարգի որենքներով, մի՞թե  
նրանք չմայրին նոր, բուրժուական  
հեղափոխական սրինականութեան:

Պատմական հարուստ փորձը սովորեցնում է, վոր մինչև այժմ վոչ մի դատակարգ հոժարակամ չի դիջել ճանապարհը մի այլ դատակարգի: Այդպիսի նախադեպ չկա համաշխարհային պատմութեան մեջ: Յեւ կոմունիստները յուրացրել են այս պատմական փորձը: Կոմունիստները կվողջունեյին բուրժուադիալի հոժարակամ հեռանալը: Սակայն իրերի այդպիսի շրջափոխութեան անհավանական է, ինչպես փորձն է ասում: Ուստի և կոմունիստներն ուղղում են պատրաստ լինել վատթարագույնին և կոչ են անում բանվոր դատակար-

դին արթուն լինել, պատրաստ լինել  
մարտի: Ո՞ւմն և պետք այն զորա-  
վարը, վորը թմրեցնում և իր բա-  
նակի արթնությունը, այն զորավա-  
րը, վորը չի հասկանում, թե հակա-  
ռակորդն անձնատուր չի լինում, վոր  
պետք և նրան խաղառ ջախջախել:  
Լինել այդպիսի զորավար, նշանա-  
կում և խարել, դավաճանել բանվոր  
դասակարգին: Ահա թե ինչու յես  
կարծում եմ, թե այն, ինչ Չեղ  
թվում և մողան անցած, իրականում  
հանդիսանում և հեղափոխական նպա-  
տակահարմարության միջոց բան-  
վոր դասակարգի համար:

Ուելս. Յես բնավ չեմ ժխտում  
բռնության անհրաժեշտությունը,  
բայց դռնում եմ, վոր պայքարի ձե-  
վերը պետք և առավելագույն չափով  
մոտիկ լինեն այն հնարավորություն-  
ներին, վոր բնձեռնում են դոյու-  
թյուն ունեցող որենքները, վորոնց  
պետք և պաշտպանել ռեակցիոն հան-

ցափորձերից : Հին կարգը չպետք է  
կաղմալուծել արդեն նրա համար ,  
վոր նա ինքնին բախականաչափ կաղ-  
մալուծվում է : Հենց դրա համար  
ինձ թվում է , վոր պայքարը կարգի  
դեմ , որենքի դեմ՝ ինչվոր հնացած ,  
մոզան անցած բան է : Ասենք , յես  
դիամամբ չափազանցում եմ , վոր-  
պեսդի ավելի վառ դրսևորեմ ճշմար-  
տությունը : Յես կարող եմ իմ տե-  
սակետը ձևակերպել հետևյալ ձևով .  
առաջին , վոր յես կարգի կողմանկից  
եմ . յերկրորդ , յես հարձակվում եմ  
դոյություն ունեցող սխառեմի վրա ,  
վորչափով նա չի ապահովում կար-  
գը . յերրորդ , յես դանում եմ , վոր  
դասակարգային պայքարի դադա-  
մարների պրոպագանդը կարող է սո-  
ցիալիզմից մեկուսացնել հենց այն  
կրթված շրջաններին , վորոնք պետք  
են սոցիալիզմի համար :

Ստալին . Մեծ , լուրջ հասարակա-  
կան դործ կատարելու համար , պետք

և վոր առկա լինի դլխավոր ուժը,  
հենարանը, հեղափոխական դասա-  
կարգը: Այնուհետև, պետք և վոր  
այդ դլխավոր ուժին ողնություն  
կազմակերպվի ոժանդակ ուժի կող-  
մից, վոր տվյալ դեպքում հանդի-  
սանում և կուսակցությունը, վորի  
մեջ մտնում են ինտելիգենցիայի լա-  
վազույն ուժերը: Դուք քիչ առաջ  
խոսում եյիք «կրթված շրջանների»  
մասին: Սակայն ի՞նչ կրթված մար-  
դիկ նկատի ունեյիք. Դուք: Միթե  
քի՞չ կրթված մարդիկ կային հին  
կարգի կողմը XVII դարում՝ Անդ-  
լիայում, և XVIII դարի վերջում՝  
Ֆրանսիայում, և Հոկտեմբերյան  
Հեղափոխության դարաշրջանում՝  
Ռուսաստանում: Հին կարգն իր  
կողմն ուներ, իր ծառայության մեջ  
ուներ բարձր կրթության տեր շատ  
մարդիկ, վորոնք պաշտպանում եյին  
հին կարգը, վորոնք դեմ եյին դնում  
նոր կարգին: Չե՞ վոր կրթությունը

մի զենք ե, վորի Լճեկտը կախված է  
այն բանից, թե ով է նրան բռնում  
իր ձեռքին, ո՞ւմն են ուզում հարվա-  
ծել այդ զենքով: Անշուշտ, սրույե-  
տարիատին, սոցիալիզմին սկսք են  
բարձր կրթւթյան տեր մարդիկ: Պարո  
ե չե՞, վոր յեանելի տխմարները չեն,  
վոր սխտի սղենն սրույետարիատին  
պայքարելու սոցիալիզմի համար,  
կառուցելու նոր հասարակություն:  
Ինտելիգենցիայի դերը յես չեմ թե-  
րազնահատում, նրա դերը յես, ընդ-  
հակառակը, ընդդժում եմ: Բանն այն  
ե միայն, թե վո՞ր ինտելիգենցիայի  
մասին ե խոսքը, վորովհետեւ ինտե-  
լիգենտները զանազան են լինում:

Ուելս. Ձի կարող հեղափոխություն  
լինել առանց արմատական փոփո-  
խություն մտցնելու Ժողովրդական  
կրթության սխտեմի մեջ: Բավական  
ե բերել յերկու որինակ. դերմանա-  
կան հանրապետության որինակը,  
վորը (հանրապետությունը) ձեռք

չտվեց կրթութեան հին սիստեմին և  
դրա համար ևլ յերբեք չդարձալ  
հանրապետութիուն, և անդլիական  
լեյբորիստական կուսակցութեան ո-  
րինակը, վորը (կուսակցութիունը)  
վճռականութիուն չունի անդելու ժո-  
ղովրդական լուսավորութեան սիս-  
տեմի արմատական փոփոխման վրա:

Ստալին. Այդ ճիշտ դիտողու-  
թիուն է:

Այժմ թույլ տվեք պատասխանել  
Ձեր յերեք կետերին:

Առաջին, հեղափոխութեան համար  
դլխաւորը՝ դա սոցիալական հենա-  
րանի առկայութիունն է: Հեղափո-  
խութեան համար այդ հենարանը  
բանւոր դասակարգն է:

Յերկրորդ, անհրաժեշտ է ոժան-  
դակ ուժ, ա՛յն, ինչ կոմունիստներն  
անվանում են կուսակցութիուն: Այս-  
տեղ կմտնեն և՛ ինտելիգենտ բան-  
վորները և՛ այն տարրերը տեխնիկա-  
կան ինտելիգենցիայից, վորոնք սերտ

կապված են — բանվոր դասակարգի հետ : Ինտելիգենցիան կարող ե ուժեղ լինել, յեթե միայն միանա բանվոր դասակարգին : Յեթե նա գնում ե բանվոր դասակարգի դեմ, նա վերածվում ե վնջնչի :

Յերրորդ, հարկավոր ե իշխանություն, վորպես վերափոխման լծակ : Նոր իշխանությունն ստեղծում ե նոր որինականություն, նոր կարգ, վորը հանդիսանում ե հեղափոխական կարգը :

Յես կողմնակից չեմ ամեն տեսակ կարգի : Յես կողմնակից եմ այնպիսի կարգի, վորը համապատասխանում ե բանվոր դասակարգի շահերին : Իսկ յեթե հին կարգի մի քանի որենքները կարող են ողտաղործվել ի նպաստ նոր կարգի համար մղվող պայքարի շահերի, ապա պետք ե ողտաղործել ե' հին որինականությունը : Յես վոչինչ չեմ կարող առարկել Ձեր այն դրույթի դեմ, թե պետք ե հարձակ-

վել զոյություն ունեցող սխտեմի  
վրա, վորչափով նա չի ապահովում  
ժողովրդի համար անհրաժեշտ կար-  
գը:

Յեւ, վերջապես, Դուք իրավացի  
չեք, յեթե կարծում եք, թե կոմու-  
նիստները սիրահար են բռնության:  
Նրանք հաճույքով կհրաժարվեյին  
բռնության մեթոդից, յեթե տիրա-  
պետող դասակարգերը համաձայնե-  
յին տեղը դիջել բանվոր դասակար-  
դին: Սակայն պատմության վորձն  
այդպիսի յենթադրության դեմ է  
խոսում:

Ուելս. Անգլիայի պատմության  
մեջ, սակայն, յեղել է մի դասակար-  
դի կողմից իշխանությունը հոժարա-  
կամ կերպով մի ուրիշ դասակարգի  
ձեռքը հանձնելու որինակ: 1830 և  
1870 թվերի ժամանակաշրջանում  
տեղի ունեցավ, առանց վորեւիցե կա-  
տաղի պայքարի, XVIII դարի վեր-  
ջերին դեռևս շատ մեծ ազդեցու-

ԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ արխատօկրատիայից  
Իշխանությունը հոժարակամ կերպով  
բուրժուազիայի ձեռքն անցնելու  
պրոցեսը, այն բուրժուազիայի, վո-  
րը հանդիսանում եր միապետության  
սանտիմենտալ հենարանը: Իշխանու-  
թյան այս փոխանցումը հետադայում  
առաջնուկեց դեպի Ֆինանսական/ օլի-  
գարխիայի հաստատումը:

Ստալին. Բայց Դուք հեղափոխու-  
թյան հարցերից աննկատելիորեն ան-  
ցաք ուեֆորմի հարցերին: Սյդ միև-  
նույն բանը չէ: Դուք չե՞ք կարծում  
արդյոք, վոք Սնդիկայում XIX դա-  
րում կատարված ուեֆորմների դոր-  
ծում մեծ դեր է խաղացել չարտիս-  
տական շարժումը:

Ուելս. Չարտիստները քիչ բան ա-  
րին և չբացան անհետ:

Ստալին. Յես Չեղ հետ համաձայն  
չեմ: Չարտիստները և նրանց կազմա-  
կերպած դորժադուլային շարժումը  
մեծ դեր խաղացին, ստիպեցին տի-

բասկետոլ դասակարգերին մի շարք  
զիջումներ անել ընտրական սխտեմի  
ասպարիզում, այսպես կոչված «նեխ-  
ված վայրերի» վերացման, «խար-  
տիայի» վորոշ կետերի իրադործման  
ասպարիզում: Չարտիզմը խաղաց  
իր վոչ-փոքր պատմական դե-  
րը և դրդեց տիրող դասակար-  
գերի մի մասին համաձայնվել  
վորոշ զիջումների, ունֆորմների՝  
մեծ ցնցումներից խուսափելու հա-  
մար: Ընդհանրապես պետք է ասել,  
վոր բոլոր տիրող դասակարգերից  
Անգլիայի տիրող դասակարգերը, և՛  
արխատոկրատիան, և՛ բուրժուա-  
դիան, հանդիսացան ամենից խելոք-  
ները, ամենից ճկունները՝ իրենց դա-  
սակարգային շահերի տեսակետից,  
իրենց իշխանությունը պահպանելու  
տեսակետից: Վերցնենք մի որինակ  
թեկուղ ժամանակակից պատմու-  
թյունից. 1926 թվի ընդհանուր դոր-  
ծադուլն Անգլիայում: Վորևե մի

բուրժուազիա, դեմ առ դեմ գտնվելով  
այդ անցքերին, յերբ արեղ-յունիոն-  
ների դիտավոր խորհուրդը գործա-  
դուլի կոչ արավ, ամենից առաջ  
կճերրակալեր արեղ-յունիոնների լի-  
զերներին: Անդլիական բուրժուա-  
զիան այդ չարավ և խելոք վարվեց,  
իր շահերի տեսակետից: Վո՛չ  
ԱՄՆ-ում, վո՛չ Գերմանիայում, վո՛չ  
Ֆրանսիայում յես չեմ տատակերաց-  
նում նման ճկուն դասակարգային  
սարազեզիա բուրժուազիայի կող-  
մից: Անդլիայի տիրապետող դասա-  
կարգերն իրենց տիրապետութ՛յան  
հաստատման շահերի համար յերբեք  
չեն հրաժարվել մանր զիջումներից,  
ռեֆորմներից: Բայց սխալ կլիներ  
մտածել, թե այդ ռեֆորմները հան-  
դիսանում են հեղափոխութ՛յուն:

Ուելս. Դուք ավելի բարձր կարծի-  
քի յեք իմ յերկրի տիրող դասակար-  
գերի մասին, քան յես: Բայց մե՞ծ և  
արդյոք առհասարակ տարբերութ՛յու-

նը փոքր հեղափոխութեան և խոշոր  
ռեֆորմի միջև, արդյոք ռեֆորմները  
փոքր հեղափոխութեանն չե՞ն:

Ստալին. Ներքեւից յեկող ճնշման,  
մասսաների ճնշման հետեանքով  
բուրժուազիան յերբեմն կարող և հա-  
մաձայնել այս կամ այն մասնակի  
ռեֆորմների, մնալով դոյութեան  
ունեցող հասարակական-տնտեսական  
կարգի հիման վրա: Այսպես վարվե-  
լով, նա գտնուած և, վոր այդ գիջում-  
ներն անհրաժեշտ են իր դասակար-  
գային տիրապետութեանը պահպա-  
նելու շահերի համար: Սրանումն և  
ռեֆորմների եյութեանը: Իսկ հեղա-  
փոխութեանը նշանակուած և իշխա-  
նութեան անցնելը մի դասակարգից  
մի ուրիշ դասակարգի: Ուստի չի  
կարելի ինչ ռեֆորմ ել ուղուած և լի-  
նի՝ անվանել հեղափոխութեանն: Ա-  
հա թե ինչո՞ւ հարկ չկա ակնկալե-  
լու, վոր հասարակակարգերի փոփո-  
խումը կարող և տեղի ունենալ ան-

նկատելիորեն մի կարգից մյուսին  
անցնելու ճանապարհով՝ սեփորմե-  
րի միջոցով, տիրապետող դասակար-  
գի գիջումների միջոցով:

Ուելս. Յես շատ յերախտապարտ  
եմ Ձեզ այս պրույցի համար, վորն  
ահազին նշանակություն ունի ինձ  
համար: Տալով ինձ Ձեր լուսարա-  
նությունները, Դուք, հավանորեն  
հիշեցիք, թե ինչպես մինչհեղափո-  
խական ընդհատակյա խմբակներում  
Ձեզ վիճակվում եր բացատրել սո-  
ցիալիզմի հիմունքները: Ներկայումս  
ամբողջ աշխարհում կան միայն  
յերկու անձնավորություններ, վո-  
րոնց կարծիքին, վորոնց յու-  
րաքանչյուր խոսքին ունկնդրում  
են միլիոնները. Դուք և Ռուդոլֆը:  
Ուրիշները կարող են քարոզել, վոր-  
քան կամենան, նրանց խոսքը վո՛չ  
կտպեն, վո՛չ կլսեն: Յես դեռևս չեմ  
կարող դնահատել այն, ինչ արված  
ե Ձեր յերկրում, ուր յես հասա

միայն յերեկ: Բայց յես տեսա արդեն  
առողջ մարդկանց յերջանիկ դեմքերը  
և յես դիտեմ, վոր Ձեզ մոտ կա-  
տարվում ե ինչ վոր շատ նշանակա-  
լից բան: 1920 թվի համեմատու-  
թյամբ կոնտրաստն ասլշեցուցիչ ե:

Ստալին. Կարելի յեր ե՛լ ավելին  
անել, յեթե մենք, բոլշևիկներս, ա-  
վելի խելոք լինեյինք:

Ուելս. Վո՛չ, յեթե առհասարակ ա-  
վելի խելոք լինեյին մարդկային ե-  
յակները: Վատ չե՛ր լինի հնարել  
մարդկային ուղեղի վերակառուցման  
հնգամյակ. այդ ուղեղին ակներևա-  
բար պակասում են շատ մասնիկներ,  
վորոնք անհրաժեշտ են կատարյալ  
սոցիալական կարգի համար: (Ծի-  
ծաղ):

Ստալին. Մտադիր չե՞ք արդյոք  
ներկա գտնվել Խորհրդային Գրող-  
ների Միության համադրումարին:

Ուելս. Յավոք սրտի, յես ունեմ  
զանազան պարտավորություններ և

կարող եմ խՄՀՄ-ում մնալ միայն մի  
չարաթ: Յես յեկա, վորպեսզի հան-  
դիպում ունենամ Ձեզ հետ և յես  
խորապես բավարարված եմ մեր  
զրույցով: Սակայն յես մտադիր եմ  
խոսել այն խորհրդային դրողների  
հետ, վորոնց յես կկարողանամ հան-  
դիպել, նրանց՝ Պեն-Վլուրի մեջ մտ-  
նելու հնարավորութեան մասին: Դա  
դրողների միջազգային կազմակեր-  
պութիւնն է, հիմնված Գոլափորթի  
կողմից, վորի մահից հետո յես դար-  
ձա նախադահ: Այս կազմակերպու-  
թիւնը դեռ թույլ է, բայց և այն-  
պես սեկցիաներ ունի շատ յերկրնե-  
րում, և, վորն ավելի կարևոր է,  
նրա անդամների յելույթները լայնո-  
րեն լուսարանվում են մամուլում:  
Այդ կազմակերպութիւնը պնդում է  
բոլոր կարծիքների, ներառյալ և ո-  
ւրոյիցիոն կարծիքները, ազատ ար-  
տահայտման իրավունքի վրա: Յես  
հույս ունեմ այս թեմայի շուրջը խո-

սել Մաքսիմ Գորկու հետ: Սակայն  
չդիտեմ, թե այստեղ կարո՞ղ ե  
արդյոք տրվել այդքան լայն ազա-  
տուլթյուն:

Ստալին. Այդ մեղանում, բոլշե-  
վիկներին մոտ, կոչվում ե «ինքնա-  
քննադատուլթյուն»: Դա լայնորեն  
կիրառվում ե ԽՍՀՄ մեջ:

Յեթե Դուք ունեք վորեւե մի ցան-  
կուլթյուն, յես սիրով կողնեմ Ձեզ:

Ուելս. Շնորհակալուլթյուն ե  
հայտնում:

Ստալին. Շնորհակալուլթյուն ե  
հայտնում զրույցի համար:

Գրի առավ՝ Կ. ՈՒՄԱՆՍԿԻ








ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034589

ФІЛС ~~40~~  
-0440000



Беседа тов. Сталина  
с английским писателем Г. Дж. Уэльсом  
Гиз. ССР Армении, Эривань, 1934 г.